

նոյնպէս և այս. X ճառագայթներէ այս տարրերութեամբ՝ որ նոյն ուժն ունենալով հանդերձ նուազ թափանցիկ են:

Թրիկէն զաղղիացի թիշկը եղաւ առաջին անգամ գործածողը նախ արևու լոյսէն քաղելով և ապա աղեղնաւոր լամբարներու երկաթ թիեններէն: Քաւարզի ոսպնածեէ անցնելէ վերջ ջուրի հոսանքով մը կը պաղեցնէր յառաջ քան մարմարն հիւանդ մասին հասցնելը: Քրոմէյըը սընդիկէ լամբարներու զիւտէն վերջ գտաւ աւելի պարզ և զօրաւոր գործից մը:

Անդրամանիշակագոյն ճառագայթները ամենէն աւելի պայծառ մանրէներու վրայ է որ կը յայտնուին. հետեարար ջրոյ զրտման մէջ ոգոնէն աւելի օգոտակար է ասոր գործածութիւնը. այս առաւելութիւնն ալ ունի որ ջուրին՝ ոչ համը կը փոխէ և ոչ ալ անոր բաղադրութեան վրայ փոփոխութիւն կը բերէ. մինչդեռ ոգոնը երկաթային համ մը կը թողու:

Այս ամլացումը կը ստացուի ջրոյ մէջ լամբարի մը ընկվամամբ (որ քաւարզէ ըլլալուն բնաւ չի կոտրիր) կամ շատ անգամներ անցնելով ճառագայթարեր լամբարին քովէն: Առաջին զիւտածին մէջ այս անտեղութիւնը կայ որ քաւարզին վրայ ջրոյ զիւտերը կը մնան, որով ապակին իր թափանցկութիւնը կորսնցնելով արգելը կ'ըլլայ ճառագայթներուն:

Դիտուած է որ այս զրութեամբ ժանտաւտինդի մանրէները 10 հարիւրորդամեղը հեռաւորութեամբ երկվայրկենի մէջ կը սատկին և չորս երկվայրկենի մէջ 20 անդիմեղը հեռաւորութեամբ:

Բացի ջուրէն այս ճառագայթները կը զտեն նաև օդը, մաքրելու համար զանազան հիւանդութեանց միջրոպաներէ: Դարձեալ կը վերածնանին թթուածինը խոնաւ օդոյ մէջ, անմաքրուր արտաշնչութենէ, բան մը ամենաօգտակար ընդուղիւայներու:

Բնոյ այս ճառագայթներու մանրէներ սպաննելու զօրութիւնը յատկացուց պատուատի. և այս պատրաստութեամբ պատուաստուղները ժանտատենդէն, մորթախտէ բոլորովին ազատ կը մնային:

Ըստ Ֆորէ-Թորէմիէի ասկարներու ձուերն ալ բոլորովին կը ջնջուէին. Ույշպոյ կ'ըսէ թէ, խղունջներ և փափկամորթներ ենթարկուելով ճառագայթման քիչ ժամէն կը սատկին. իսկ ճանճերը բոլորովին կ'ապշանան. մինչդեռ չափաւոր ճառագայթմամբ՝ հունտերը ծլելու կը ձկտէին, սաստկացնելով իրենց այս ուժը կը ջնջուէին սպիտի նախանիւթին կրած ձեսփոխութեան պատճառաւ:

Հաքարի, իւղերու, պրոտէին նիւթերու մէջ խմորում առաջ թերելուն՝ պէտք չի ձգեր խմոր զործածելու:

Հ. Վ. Խ.

ՓԱԿԱՐԱՍՈՒՄ ՄԵՋ

ԱՄԵՆԱԿԱՐԵՒԹՈՐ ԱԿԴԱԼԵԼԻՔ

Տարիներ առաջ սկսած էի այս աշխատութիւնս որուն կմախըը միայն պիտի նշմարեն ներկայ յօդուածներուն մէջ՝ բազմավկափ ընթերցողները:

Գննադատական ասպարէզը զեն անծանօթ էր ինձի երբ առաջին անգամ կարդալով «Բնուգանդարան»ը անդրադամած էի անոր խօսքերուն անսայթագրութիւնը՝ և շիջելափառ վիճակը՝ այդ պատմութեան: Ու Բանասէր մը հանդիսանալու ձգուում չունենալով հանդերձ, սակայն «Բնուգանդարան»ի վէրքերը սպիացած տեսնել ցանկալով, երբ 1907ին Հայր Նահապետան իւր սրամութեանց թոփչըը փորձեց՝, ես

1. Տես Բազմավէպ 1906-7, կամ՝ Ուղղագրութիւնը ազգային մատենագրաց, տպ. Ա. Ղազար, 1907.

ալ «Նոր նկատողութիւններ Փաւաստու Բիւզանդի մասին» վերնագրով ուղղեցի առ նա 143 նախադասութիւններ՝ որ մասսամբ բազմավայրեցի մէջ՝ և ամրողապէս՝ «Աւղագրութիւններ ազգային մասնենագրաց»ի «Բաւելուած»ին հետ լոյս տեսան¹: Անոնց մէջ կան նաև երկրայական դիտողութիւններ գրուած սոսկ Քննադատներու հանձարը դրելու համար, որմէ կը յուսայի հրացագործակ կայծեր ստանալ: Քննադատութիւնը, սակայն, չուզեց իւր աչցերը բանալ կամ շատ ուշ: Մինչդեռ ես՝ այն օրերն իսկ՝ ահա նոր գաղափար մը յդանալով, զրբի ճակատագրին տակ երկասիրութեան մը ուղուազիծը կը կազմէի հետեւել ձևով:

«Մ Ա. Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Ն Ա Խ Ն Ե Ա Ց

Փ Ա. Ի Ս Ը Ո Ս Բ Ո Ւ Զ Ա Ն Դ Ա Ց Ի »

Տպագրեալ երկարւն,

Եղեալ՝

յառաջնումն՝

յերկրորդումն՝

Ջընագիրն՝ որպէս և չն յըն-	Չուզդեալն, ըստ ամենայն զե-
արելազոյն մեռագրի.	ղավայշել հայեցուածոց.

Եւ ի ստորեւ նոցին՝

զ՞րպէսն, և զվան չը, և զուսոմք... Ջանդրագար-
առնեանց զդիտողութիւնն համօրէն, — այլպէն հան-
դեր:

Գործին դժուարութեան փորձը առած իսկ ըլլալով՝ դեռ նոյն համոզումն ունիմ թէ կ'արժէ այդպիսի աշխատութիւն մը բովանդակել, սակայն օտարութ պարագայններ ընդմիջելով՝ շուրջ երեք տարի մոռացումէ մը յետոյ՝ երր այսօր կրկին գրիչս ձեռք կ'առնեմ բուզանդարանի աղարսուած փայլը նորոգելու, բեռք կրկնակի ծանրացած կը զգամ և չունիմ պատրաստական խանո՞՝ Վիրոյիշեալ ատաղձիս հապճեպ մարմնացումը ապահովելու: Թէ և ստուգի բուզանդարանը գեռ չէ ունեցեր իւր մասին ստուարա- հատոր զրութիւններ որոնց լուծէն կամ հոծէն քազմակարեան զաղանիքներ, ինչ- պէս Ազաթանգեղոսինը, այնու հանդերձ՝ Փաւաստոսի մասին լոյս տեսած յօդուածներն ու զրբոյկներն ալ եթէ միացուին կրկնան նոյնպիսի հատորներ բարդել՝ ինչ որ տպա- տուկը կը ծնանի: Եւ ես արդ՝ որպէս զի գէթ քանի մը զիխաւոր կէտերու վրայ այլես երկրայութիւններ չծագին, կը փութամ հրատարակել՝ շօշափելի ստուգութիւն- ները ամենէն առաջ:

* * *

Աղաւաղուած բնացիրներ վերականցենու միակ ապամով միջոցը ՀԱՐԵՄԱՏՈՒԹԻՒՆՆ է, անտարակոյս: Բուզանդարանի առաջակայ սրբագրութիւններս Համեմատական դրու- րեամբ կատարած եմ:

Վստահելի օրինակը [որուն անունը յիշատակել պիտի չմոռանամ,] կը նշանա- կեմ Ա., իսկ Փաւաստոսի Պատմութիւնը՝ Փթ.:

Այս համեմատութիւնը ոչ միայն բառական ազդութիւններ պիտի տայ մեզի այլ նաև պատմական ձդումներ, ևայլն:

1. Ել 890-416. Մէնագր:

ԲՈՒՀԱՆԴԱՐԱՄԱՆ, տպ. Վենետիկ, 1889,

էջ 68. — « Նոյնպէս ստրատելատութեան սպարապետութեան գօրավարութեանն մարտի կոռուելոյ, գործոյ ըռազմիկ ճակատամուղ նիզակին, իրափառն՝ աղաւազգիք աղանաղրօշք արծուենշանց վարժմականից աներկիւղը բաջասիրտք »...:

Աւերակ տաճարի մը առջև կանգնած ենք. հիմնական նորոգութեան կը կարօտի նաև՝ խօսքին շարունակութիւն՝ ամրող հատուածը՝ որմէ, չկրկնելու համար, այնչափ միայն կանինցի նախադասել խօսքիս վրան՝ որչափ որ Արդարդ. Ազգ. Մատենագրացին մէջ ալ յիշուած է և խնդրապու նկատուած: Այդ ծուէնները հանգրիճելու ճիգեր թափած է նաև Հրաշեայ Աճառեան. (Տես Բանակը ամսարեր, 1904, էջ 99), բայց՝ բանալին ձեռքի մէջ ունենալով հանդերձ՝ չէ յառաջած գաղտնիքը լուծել (աղանազգիք և աղանաղրօշք բառերուն): Ահա իւր կարծիքը. — « Երրորդը՝ աղաւանդրօշք բառերուն»: Ահա աղաւանդրուած է ուղղել «աղեղնաղրօշք», բայց այս տեսակ բառ մը միտք չունի. ըստ իս ուղղել պէսար է «աղաւանդրօշք», յաւելմամբ միակ և տառին. այս ուղղութիւնը կը դրդեն յաջորդ արծուելամբ և վարժնականիք բառերը. Մամիկոնեանց գրօշակներուն վրայ նկարուած էր արծիւ, վարուժնակ, կամ աղաւանի: Կառկածելի է երկրորդը, որ և կը կարծեմ թէ այլափոխեալ է «աղաւանդրօշք» բառէն. չեմ կրնար գտնել ուրիշ բառ մը՝ որուն առաջին մասը այսպէս յարմարէր ազգ գոյականին, և երկրորդ տառական ուղղութեան տեսակնէով այսքան չնչին փոփոխութիւն ցոյց տար. (—q և ն—ո). իրաւոնք կայ նաև կարծելու թէ «աղաւանդրօշք» այսպէս խառնակուած ըլլայ յաջորդ աղանաղրօշք բառէն շփոթուելով: Բայց ամենէն աւելի դժուար է «իրափառն» ձեր, որուն դէմ և վենետիկեան վեց օրինակներէն չորսը ունին «իրաւափառն». Նախկին ձերին մօտիկ կը հնչէ քիչ մը վարը «իրաքաջ», բառը. «պարզեեալ յերկնից բարիանուն իրաքաջ ի մեծի նահապետութեան պատերազմի». բայց և այսպէս ինձ կը թուի թէ երկուրին մէջ աւելի ընտրելի է «իրաւափառն» ձեր, որ կարող է յն. ծրծծօծօօօօ «որթոդոքս, ուղղափառ» բառին թարգմանութիւնն ըլլալ: Հայկ. Բառ. մոռցած է նշանակել թէ «իրափառն» և թէ՝ «իրաւափառն»:

Ներուի ինձ այստեղ զիտել տալ որ Հայկաբեան Բառդիրքը շատ մը բառեր զանց ըրած է յիշել ու երկ մոռանալով կամ յանիորնուրդս, այլ զիտակցորեն. և այս զիտակցութիւնը նաև բազմաթիւ բառերու ուղղագրութեանց մէջ իւր գերն ունի:

Հայր Նահապետեան (Հն. պիտի համառոտազրեմ), վերոյշեալ նօտրազիր բառերուն վէրը փորձած է սրամուութեան ձեռքով թժշկել, կարդալով.

«իրափառն աղաւանդրօշք, աղաւանդրօշք, արծուենշանց վարդիմականիք, աներկիւղը», և այլն:

Հն. ալ իւր պատճառաբանութիւնները պարզելէ յեռոյ կը յաւելու նաև ապացոյցի օրինակներ Եղիշէն: Եթէ Համեմատութիւնը չունենայինք՝ Տրամարանութիւնը պիտի գովուէր:

Տեսնենք, սակայն, պատգամը Համեմատութեան (ի ստորև):

* Բուգ. էջ 67 (Դպր. Դ. Գ. Բ.)

Ա. էջ 16.

Յայն ժամանակի ինդեր եւանէր արքայն Արշակ Ակապա յարուցեալ իւրնին թագաւորն զօրօրմ իւրուիք տոնմիմ զօրավարաց ազգին բաշացն մամիկոններց. ի ինդեր եւանէ տաշ ազգն Մամիկոններց, որ էին մանաւանց զի իւր պայտակալս և սուսցիչը և մաւմիկալը և ըստամիք թագաւորին.

1. Մանոթութիւնը կ'ըսէ. «Ցերիս օրինակն իրաւափառն».

Ապա երթեալ գտանէր զնոսա յամուրս աւշխարհին ցայց յիւրեանց աշխարհին,
և դարձուցանէր զնոսա յընդամութիւնն. զի պառականաւուր է քականաւուր էնս յընդանութենէն
և յամենայն գործոց Հայոց ի մամանակս խուլութեանն Տիբեանայ:

Խառնակութիւնը այնչափ շատ է որ կը ստիպուիմ հանգոյցներով առաջ երթաւ, և նախ՝ սոյն զիսուն վրայ այլ ևս չմտածելու համար՝ պէտք է ի նկատի առնել որ բայցայուած է նաև վերնագիրը.

«Յաղագս շինութեան կարգաց յօրինելոց աշխարհին, նուաճութեան յիւրաբանչիւր տեղիս վարուց կարգաց, նորոգելոյ աշխարհին թագաւորութեան Հայոց»:

Խօսքի հակասական իմաստներուն նայելով և լոկ սրամութեան ապաւինելով՝ յարինելոց բառը՝ համարած էի ուղղելի՝ անբերեց. բայց՝ երբ համեմատենց յառաջարան զիսակարգութեանց Ցուցակին հետ, պէտք է սրբազրե՝ «և յօրինուածոց». սակայն այդ եալ անպայման ուղղութիւն մը համարիլ չէ՝ կարելի, վասն զի ցուցակի պարբերութեանց մէջն ալ նորանոր աղճատանը կը հոլովին.

«Յաղագս շինութեան կարգաց և յօրինուածոց աշխարհին Հայոց, վարուց և կարգոց նուաճութեան, և յօրինելոյ և նորոգելոյ թագաւորութեանն»:

Ի՞նչ է պատճառը այդչափ խտրութեանց որ ամէն տողի վրայ կը հանդիպինց, կամ՝ ի՞նչ կը մատնանըշեն անզուգակշիռ այլայլութիւնները՝ այդ մասին աւելի վերջը խորհրդածել լաւագոյն է:

Իսկ հանդիպակաց միւնակները նկատելով՝ յայտնի կը տեսնուի որ Ա(ՅԲ)ի հատուածը անհամեմատ ընտիր է իւր կանոնաւորութեամբը՝ պարզութեամբն և բանաւորութեամբը, նա կը թելազրէ ուղղել.

2. Ժամանակ'ի խնդիր...

3. Դաշեակր.

4. Բնեղ իւր վասն? (= յընդանութիւնն).

5. (ի ժամանակս խորուրեան, ո ձայնարանական մերձաւորութեամբ') իշխանութեանն, (իսկ համեմատութեան թելազրութենէն՝ բազաւորութեամբ) ^{1.}

6. Յամուրս աշխարհին Տայոց յիւրեանց աշխարհին. — պէտք է զուել՝ որով կ'ունենանց – (Հմմտ. Ա.) – յամուրս աշխարհին իւրեանց Տայոց: Բայց զեռ նժարը չի հաւասարիր, անհարազատ եղաբայրներ են հետեւալները.

Յայնմ ժամանակ.

Ալբայն Արշակ.

Տուշմի զօրպարաց.

Ազդին բաշացն.

Մանաւանդ զի.

Դայեակը.

Ապա.

(Յարուցեալ) ինքնին թագաւորն.

Զօրոն իւրովիք.

Քաջ ազդին.

Որ.

Մանկակալց և անուցիչը.

1. Ըստ այդմ՝ պէտք է մոռացութեան մատնուի՝ միաձոյլ համաձայնութիւնը շատ մը կարծիքներու որ կ'առաջիկն «քոլութիւն» (խալութեաթ), Տե՛ս Հայկականական մատնութիւն, (Նորաց Դ., Բիւզանդացի), տպ. Վ. Պուլիս 1880, էջ 51, Արքարատ ամսագիր 1908, էջ 248, Ամ. կանայեանց, նուզ. Ազգ. Մատնակարաց, էջ 71:

Մեկնութիւններով միայն կը հաշտուին այս խռոված ազգակիցները. — բայց արդ պէտք է յառաջ վարենք սիւնակներուն ընթերցումը:

ՓԲ. էջ 67.

Եւ կացոյց արքայն զՎարդան զերէց եղրայրն ի նահապետութեանն ազգին իրեանց, զՎարդան զիշին եղրայրն զեր դայեակն ի սպարապետութիւնն օրովագործեան յիշուն պատերազմացն. սոյնպէս և զկրտածն ի ՊիծՍ օրուն կացուցանէր. Սյոյն զիս զամնայն ազգուն զորացն կացուցանէր. Սյոյն զիս զամնայն ազգուն զորացն կացուցանէր նահապետացն,

որպէս առաջին թագաւորցն նուաճեալը յիւրաքանչիր չափու:

Եւ հազարներ զմիծամիծն սիրիսամաշիր զօրս քամանան յամնայն կողմանց, սահմանացն Հայոց սահմանապահն կացուցանէր:

Այստեղ Փաւստոսի զրագիրը, (մանկիկ տիրացո՞ւ մը արդեօք՝ թէ ցնլած տէրտէ՞ր մը, զգիտեմ.) խղճահարութիւն կ'ունենայ Գիունիքը մոռացած ըլլալու մասին, և բանդագուշելով կ'երկրորդէ ու կը վարատէ նախասացեալ իմաստներէն, և, — բնազրին ծանօթացրուած կամ աւերտուած զեհկանութեան, շինկանացն ԱՇԽ. ԳնՈՒՆՆԵԱՑ հազարապետն ամենայն երկրին:

Եւ նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւնն թագաւորութեանն Հայաստան երկրին որպէս և զառաջինն. միամիծն յիւրաքամիշիր զամու, և զործակալըն յիւրաքամիշիր չափու. Եւ սկիզբն զործակալութեանն հազարապութեանն աշխարհանես ինամսկալութեանն, աշխարհացն աշխարհատած զեհկանութեան, շինկանացն ԱՇԽ. ԳնՈՒՆՆԵԱՑ հազարապետն ամենայն երկրին:

Նոյնպէս սարաւելասութեան սպարապետութեանն զօրագիրութեանն մարտու, զորոնց սոսպամի ճանակակի ինքանակին, իրառուու աղանազգի աղանազգունք արծուենանք, վարժականից աներկիւց թաշասիրաց նահանակաթ քանանուն, բարինանուն բարինամաւաւաւ բարիկործ յաշուակէ ի զոր պատերազմաց:

ի ոռու յանձնան կարգաց ի մամիկոնեան ազգին, ի վերայ իշխանութեանն բովանդակ՝ ի վերայ ամենայն զօրոց զօրագիրութեանն բազմելիքանն Հայոց մեծաց, հանապազ յամենայն մամ յաղբոզ ազգին պարագեալ յերկնց բարիստուն իրացած ի մեծ նախապետութիւն պատերազմի. Եւ այլ յայստ ազգաց և ի խոնարհ՝ որ զործակար անոն բարիւր առաջի արցանին պատիւր ի զուռ քազմէին. Թոր զնահապետ մեծամեծն ո զտանուելու որց գործակալը միայն էին, ինը նարիւր բարձ՝ որ մասնէր ի մամ տաշարիմ ուրախութեանն բարեկալացն կարգելոց. Թող զունիկյա զործակալութեանն պատու:

Մամիկոնեանց Արտաւազդեանն եղրայրներու երեք կամ յորս ըլլալու մասին «Բիշաբեղի Մամիկոնեաններ»ու հեղինակը՝ յէջ 159³, լակոնարանութիւն մը կ'ընծայէ՝ ի նպաստ բուզանդարանի խօսքին:

Հըսչեայ Աճառեան՝ «ի պետի զօրացն կացուցանէր» խօսքին մէջ աւելորդ Ամը կը նշմարէ, բայց Համեմատութիւնը հաւան չէ այդ կարծեաց, որովհետեւ կ'ըսէ Ա. «Հազարապետի կացուցանէր»։ Բատ իս՝ աւելի ուշագրաւիչ պէտք են ըլլալ նոյն խօսքի հակուտնեան մասնիկները զոր հոս կ'ընդգրծեմ։

Ա. էջ 17.

Եւ էին յազգին Մամիկոնենից եղրարը չորրո. և անոն նոցա Վարդան և Վասակ, Վահամի և Վրուժ, որդիք Արտաւազ(շ)այ որդույց Վաշէի Մամիկոնենուոյ. և կացուցանէր զնոսա զօրագիրը Հայոց մեծաց,

զոր առաջին թագաւորցն նուաճեալ էին յիւրաքանչիր յաւուրիս:

Եւ ասոյ զզողն Հայոց ի մեռ Վասակայ կալ ընդդէմ պատերազմաց ասպարապետութեամբ. և զերիս եղրարը նորա ընդ նամ հազարաթը ՍՍՍ կացուցանէր:

ի մարտ պատերազմաց

իրեր հոր ընդ եղեցն ընթանային արբաւէր ազգն Մամիկոնենից, իրեր կարգեան զօրագիրը Մամիկոնե:

Ա. էջ 32

... մեծն հերսուս... նորոգէր զզաւս իշխանացն Հայոց, որը էր կարեալ ի Խոսրովաց և յայլ թազաւորացին. Զնոյն և նա կարգէր ի մամ մաշոյմ ի սեղան արթային Արշակայ, բարձս չորիքարիր,

1. Խնճենանը իւր «Հնախօսութիւն Հայաստանի»ն մէջ կը գնէ «աշխարհաջԱրած»։ Տես համ. Բ. էջ 153. (ապ. Ա. Ղ. Ղազար)։
2. Տպ. Ա. Ղազար, 1904. — Հ. Ն. Անդրեկեան։

«ի պետու զարացն»
«հազարապետու»

Այս արտուղութեան պէտք չունինք, եթէ ուզենք առաջին տողը «ի պետու հայացն» կարգաւու:

Իշխնենք արդ ամենակարեւոր բառերուն, և զանոնք սրբազնութու համար ուրիշ ոչինչ հարկաւոր է բայց միայն դժմ' զիմաց ճակատեցնել:

Փի՞ բառերը՝ բնագրին կարգով կը շարեմ, իսկ Արքները դասաւորիչ տառերով կը սահմանեմ:

(ՓԲ. Էջ 68).

(Ա. Էջ 17).

1. - Ստրատելատութեան	—	Ասպարոսիսադք	(ը)
2. - Սպարապետութեան	=	Զօրավարք	(ա)
3. - Զօրավարութեան	=	Մ Ա. Մ Ի Կ Ո Ն Ք ?	(բ)
4. - Մարտի կրուելոյ	=	Ռ Ա. Զ Մ Ա Հ Ա Տ Ք	(դ)
5. - Գործոյ ըրազմիկ	=	Ճակատամուխք	(է)
6. - Ճակատամուխ	=	Ն Ի Զ Ա Կ Ա Փ Ա Յ Լ Ք	(է)
7. - Նիզակին իրափառն	=	Ա Ղ Ե Ղ Ն Ա Զ Ի Գ Ք	(ե)
8. - Աղմանազգիք	=	Ա Ղ Ե Ղ Ն Ա Զ Ի Գ Ք	(ժ)
9. - Աղմանազրոչք	=	Արծուանչանք	(ժ)
10. - Արծուէնչանք	=	Արծուանչանք	(զ)
11. - Վարժնականիչք	—		
12. - Աներկիւզք	=	Աներկիւզքի պատերազմունս (ժ)	
13. - Քաջասիրոք	=	Քաջասիրոք	(թ)
14. - Նահատակք	—		
15. - Քաջանունք	—		
16. - Բարենչանս	=	Բարենչանք	(ժթ)
17. - Բարեհսմբաւք	=	Բարեհսմբաւք	(ժթ)
18. - Բարեգործք	—		
19. - Բաջողակք	=	Աջողակք	(ժա)
ի գործ պատերազմաց		ի մարտու պատերազմաց	

Ա.ի հաւատարմութեան գերազանցութիւնը ակներև ըլլալով հանդերձ՝ կարելի է ակամայ թերութիւններ նաև իւր վրայ նկատել: «Աղեղնազրոշք»ը որ բնականօրէն իւր «Աղեղնաձիգք» լրծակցին հետ պիտի ընթանար, փոխանակ 9երորդի 14երորդ կարգը կը զրաւէ, արդեօք մոռացութեան մը արդիւնք: Եւ ահա այստեղ է որ կասկած կը ծագի թէ մի՛ զուցէ անտեսուած ըլլան նաև այն բառերը որ համեմատութեան մէջ չէզոր մնացին, զորս եկամուռ կամ մեկնողական բառեր անուանել՝ պիտի վստահէի:

Յուցազրած բառերու յաջորդող բուզանդարանի միւս տողերն ալ կը կաղան: Ես պիտի լուեմ այդ երկդիմի երեսյթներու մասին, միայն կ'ուզէի մատնանշել որ «Նահատեցուրիսան» բառը «պատերազմի»ին հետ զուգուած բիչ մը անքնական կը թուի. մի՞ արդեօք «ի մեծի նահատեցուրիսան պատերազմի» աւելի ուզիդ ըլլայ:

Հարուսակելի